

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆՑ\*

Հոսիկ Ավանեսով

**Քանակի բառեր`** Կիրովականի մանկավարժական ինստիտուտ, ինքնապաշտպանության ուժեր, Ազգային լեզուն, «Արծիվ-3»:

Արցախյան ազատագրական պատերազմն (1988-1994թթ.)\*\* առաջացել է Ադրբեջանի ռազմական ագրեսիայի արդյունքում, որ 1988-ից մինչև 1991թ-ի ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածն այն կրել է հիմնականում տեղային բնույթ: Հետագայում Ադրբեջանը ձեռնարկեց կազմակերպված ու բացահայտ ռազմական ներխուժում, որն ընթանում էր տարածքների զավթումով ու հայ բնակչությանը բռնի տեղահանումներով, որին դիմակայելու ու հայրենի երկրամասը պաշտպանելու նպատակով սկիզբ առավ Արցախյան ազատամարտը, որը, հիրավի, ռազմաքաղաքական կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի նորագույն պատմության համար: Շնորհիվ համազգային պայքարի, մեր հայրենիքի մի հատվածի վրա վերականգնվեց հայկական պետականությունը:

Պատմաբան Մ. Ա. Հարությունյանի կարծիքով` Արցախի Հանրապետության կազմավորման գործընթացն ունեցել է իրավաքաղաքական երեք հանգրվան.

**1988 թ. փետրվարի 20-ից 1991թ. սեպտեմբերի 2.**

**1991 թ. սեպտեմբերի 2-ից դեկտեմբերի 10.**

**1991թ. դեկտեմբերի 10-ից 1992թ. հունվարի 8 [1]:**

Արցախյան ազատամարտի կարևորագույն ձեռքբերումներից է Հայոց բանակի կազմավորումը: Գործընթաց, որն ընթացել է մի քանի փուլով` կամավորական-աշխարհագրային ջոկատների կազմավորումից մինչև կանոնավոր բանակի ձևավորումը, տեղի է ունեցել մարտական գործողություններին զուգընթաց ու Արցախի դեմ Ադրբեջանի կողմից կատարված էթնիկ զտումների և ագրեսիայի արդյունքում առաջացած ծանր պայմաններում:

Միանգամայն ակնհայտ է, որ կանոնավոր ու մարտունակ բանակի կազմավորումը ժամանակի հրամայական էր և թելադրված էր նյութատեխնիկական ու մարդկային ռեսուրսներով մի քանի անգամ գերակշռող Ադրբեջանի ագրեսիային ու պետական ահաբեկչական քաղաքականությանը արդյունավետորեն դիմադրավելու և իր բնօրրանում արցախահայության ապրելու ու արարելու անքակտելի իրավունքը պաշտպանելու անհրաժեշտությունից [2]:

1994թ. Հայաստանի և ադրբեջանականի միջև ստորագրվել է գինադադար: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի և Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի միջնորդությամբ Հայաստանի, Ադրբեջանի և Արցախի խորհուրդների խոսնակները ստորագրել են Արցախի պատերազմում արդեն բանակցված և Բիշկեքում

\* Հոդվածն ընդունվել է 30.01.17:  
Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.թ., դոցենտ Մ.Հարությունյանը:  
\* Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՄՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ` № SCS 16.10-007 գիտական թեմայի շրջանակներում:  
\*\* Մասնագիտական գրականության մեջ հանդիպվում է նաև Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (ՂԱՊ), Արցախյան պատերազմ կամ ազատամարտ, Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտություն և այլ եզրույթներով:

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՄԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

(Ղրղզստան) ստորագրված արարողակարգը: Բանակցություններում Արցախն առաջին անգամ ճանաչվել է որպես առանձին քաղաքական և տարածքային միավոր:

Ժամանակի ընթացքում յուրաքանչյուր դարակազմիկ իրադարձություն ունենում է իր վերահիմաստավորման պահանջը: Այդ ճանապարհին ստեղծվում են զանազան աշխատանքներ՝ հուշագրությունների, վկայությունների, ակնարկների տեսքով, որոնք ընդհանրացնելու և գիտական ուսումնասիրության նյութ դարձնելու անհրաժեշտություն է առաջանում: Ակնհայտ է, որ միայն վկայություններով, հուշագրություններով հնարավոր չէ լիարժեք գիտական ուսումնասիրություն կատարել: Ղրա համար պահանջվում են նաև համապատասխան արխիվային, փաստավավերագրական նյութեր, տվյալ ժամանակի պարբերական մամուլի հրատարակումների ընդհանրացում, տարբեր հիմնահարցերի շուրջ մասնակիցների ու ակնմատես գործիչների պարզաբանումները և կարծիքները: Նշված գործնթացի համակարգման արդյունքում մի շարք աշխատություններ են հրատարակվում Արցախյան պատերազմին նվիրված: Այդ աշխատանքների շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ուսումնական հաստատություններում սովորողների ունեցած ներդրման մասին հրատարակումները:

Գրականագետ **Ս. Խանյանն[3]** իր ուսումնասիրություններում անդրադարձել է ազգային - ազատագրական պայքարում ԱրԴՀ-ի ունեցած դերակատարությանը:

Հոդվածում քնարկվող մի շարք հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են **Լ. Գրիգորյանի[4]**, **Ս. Սարգսյանի[5]**, **Ռ. Բալայանի [6]** աշխատությունները: **ԱրԴՀ** ուսանողների սխրանքը բացահայտելու և նրանց հիշատակը հավերժացնելու կոչված առաջին ամբողջական ժողովածուի[7] հրատարակումը միաժամանակ նպատակ է հետապնդել՝ ստեղծելու անհրաժեշտ հիմքեր երկրորդ լրամշակված հրատարակությունն իրականացնելու համար 2009 թվականին, Երևանում «Ձանգակ-97» հրատարակչությունում [8]:

Խնդրո առարկա թեմային առանձին հոդվածներով անդրադարձել է նաև պատմաբան **Մ.Ա. Հարությունյանը [9]**, որոնցում հեղինակը լուսաբանել է ԱրԴՀ-ն Արցախյան ազատամարտի տարներին, առանձին դրվագներով ներկայացրել է նաև Արցախի մայր բուհի ուսանողության մասնակցությունը հայրենիքի պաշտպանությանը, ազգային-ազատագրական նորոյա պայքարում Արցախի մայր բուհին առնչվող հիմնահարցեր:

Արցախյան գոյամարտին ուսանող ազատամարտիկների մասնակցության վերաբերյալ նյութեր կան նաև պարբերական մամուլում[10]: Ուսանողության մասնակցությունը Հայոց հայրենական պատերազմին առանձին ակնարկային հոդվածի նյութ է դարձել ազգային-ազատագրական պայքարին նվիրված մեկ հատորից բաղկացած հանրագիտարանում [11]:

Սույն ուսումնասիրության վերաբերյալ նյութեր կան նաև «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվում [12]:

Արցախյան ազգային ազատագրական պայքարում իրենց ուրույն դերակատարությունն են ունեցել միջնակարգ, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողները, որոնք սկզբնական շրջանում ծավալում էին ընդհատակյա գործունեություն, այդ թվում նաև հրատարակչական:

**Աշակերտների մասնակցությունը ազգային ազատագրական պայքարին**

Խնդրո առարկա թեմային առնչվող նյութերի բացարձակ մեծամասնության մեջ անդրադարձ է կատարվում հիմնականում Արցախյան ազատամարտում ունեցած ուսանողության դերակատարության մասին, որն էլ այնպիսի տպավորություն է ստեղծում, թե աշակերտները որևէ ներդրում չեն ունեցել ազգային ազատագրական պայքարում: Մեր կողմից կատարված սույն հետազոտությունում հաշվի առնելով վերոնշ-

յալ հանգամանքը՝ ադրադարձել ենք նաև աշակերտների ունեցած դերակատարությանը՝ դրանով մեր համեստ ներդրում ունենալով վերոհիշյալ բացի լրացման գործում:

1988 թ. սկզբներին Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան համար 3 միջնակարգ դպրոցի բարձր դասարանցիները հիմնել են ընդհատակյա խմբակ, որի նպատակն էր համախմբել ազգությամբ հայ համաքաղաքացիների ջանքերը Մայր Հայաստանին Արցախի վերամիավորման ուղղությամբ:

Աշակերտական ընդհատակյա խմբակը լույս է ընծայել նաև «Վանա լիճ» աշակերտական քաղաքական ամսաթերթը: Անդրանիկ համարը թվագրված է 1988 թ. մայիսի 10-ով: Խմբագիր-հրատարակիչն էր Միեր Հարությունյանը: Թերթն ունեցել է «Հայ ժողովուրդ, ազատությունդ քո միասնության մեջ է» բնաբանը:

1988 թ. հունիսի 1-ի համարը կրել է «Հայերի համայն աշխարհի, միացե՛ք» բնաբանը: Թերթը քարոզել է ազգային գաղափարներ, Արցախյան շարժումը դիտարկել որպես գերագույն նպատակին՝ Արևմտյան Հայաստանին վերատիրելու սկիզբ:

Շուշիի հայ բնակչության բռնագաղթից հետո [13] Ստեփանակերտում ապաստան գտած աշակերտները վերսկսեցին իրենց ընդհատակյա գործունեությունը՝ իրենց խմբակը վերանվանելով «Արևմտյան Հայաստան» կազմակերպություն: Այն հրատարակել է «Արևմտյան Հայաստան» աշակերտական, քաղաքական ընդհատակյա շաբաթաթերթը: Առաջին համարը լույս է տեսել 1989 թ. հունվարի 19-ին՝ Միեր Հարությունյանի խմբագրությամբ ու ջանքերով:

Կրել է «Հայ ժողովուրդ, փրկությունդ քո միասնության մեջ է» բնաբանը\*:

Ստեփանակերտ, 1989թ. մայիսի 5-ին թերթը լույս է տեսել նոր զլխագրով՝ «Ծովից ծով Հայաստան»: Աշակերտական, քաղաքական ընդհատակյա շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչն էր Միեր Հարությունյանը: Դատելով «Հայաստանի ժողովուրդական կուսակցության» մարմնի գրառումից՝ կարող ենք ենթադրել, որ այն ունեցել է լուրջ և հեռագնա նպատակներ:

Կրել է «Լինենք բռունցք» խորագիրը [14]:

Ազգային գաղափարախոսության տարածման ու հրատարակչական գործնետնությունից բացի՝ աշակերտներն ակտիվորեն մասնակցել են ազգային ազատագրական պայքարին ինչպես տարբեր ջոկատների կազմում, այնպես էլ առաձին աշակերտական ջոկատներով: Վերջներից հայտնի է Ազգային լեգեոնը:

«Ազգային լեգեոն» կամավորական ջոկատը կազմավորվել է 1989 թվականին Երևանում մայրաքաղաքի տարբեր դպրոցների 9-10-րդ դասարանի աշակերտներից:

1992թվականին ջոկատը համալրվել է Մասիսի և Միսիանի նույն տարիքի կամավորականներով: Ունեցել է շտաբ, դրոշ, զինանշան: Մինչև 1992 թվականի հունվարը՝ «Ազգային լեգեոնը» մասնակցել է ուսումնամարզական հավաքների: 1992 թվականի աշնանը ջոկատի հիմքի վրա կազմավորվել է «Արծիվ-3» կամավորական գումարտակը: 1992-1994 թվականներին «Ազգային լեգեոնը» մասնակցել է ՀՀ Գորիսի (Շուռնուխ, Աղբուլաղ, Կոռնիձոր), Կապանի, Միսիանի և Արցախի Հանրապետության Ասկերանի, Մարտակերտի (Հոռաթաղ, Չլդրան, Մաղավուզ, Հակոբ Կամարի, Տոնաշեն, Մադաղիս), Որոտանի (Կուրաթլուի), (Սեյթաս, Մագրա, Վերին Ջիբիբլի, Ներքին Ջիբիբլի), Բերձորի (Ծաղկաբերդ, Կուշչի) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Հրամանատարներ՝ Ս. Հակոբյան, Լ. Գևորգյան (մարտական հրամանատար), շտաբի պետ՝ Հ. Գերոյան [15]:

\* Պահպանվել է սևագիր ու անավարտ օրինակը:

**Ուսանողների մասնակցությունը Հայոց հայրենական պատերազմին**

Դեռևս 1986թ. ապրիլից ընդհատակում գործող «Արցախական միության» աշխատանքներին մասնակցում էին հայ ուսանողներ, որոնք պայքարի փորձ ձեռք բերեցին ու ազատագրական պայքարի կրողներ դարձան՝ հետագայում ստանձնելով ողջ ուսանողության ներուժի համակարգման ու կազմակերպման, գաղափարական կողմնորոշման և իրենց հետևից տանելու առաքելությունը [16]:

1988թ. գարնանը ձեռնարկվեցին ուսանողությանը կազմակերպելու և ջանքերը համախմբելու քայլեր: Դրա համար անհարժեշտ էին միավորող գաղափար և ծրագրված ու նպատակաուղղված գործելակերպ, որը կանոնակարգված պիտի լիներ կանոնադրությամբ: Այդ խնդիրը լուծելու համար ՀԸԱԿ, որն առաջադրել էր ռազմաքաղաքական խնդիրներ: Ակտիվիստ ուսանողները 1988-ի մարտ ամսում երդվեցին ՀԸԱԿ-ի ծրագրի, կանոնադրության, զենքի և եռագույն դրոշի վրա: Դա, փաստորեն, դարձավ նրանց զինվորական ու կուսակցական երդումը: Կուսակցության շարքերն ընդլայնելու նպատակով գաղափարական աշխատանք ծավալվեց ուսանողության շրջանում:

Ուսանող-ակտիվիստները գործում էին շատ զգույշ՝ ՊԱԿ-ի լրտեսներից գաղտնի մնալու և պատահական մարդկանցից զերծ մնալու նպատակով: Իսկ ընտրությունը կատարվում էր խիստ չափանիշներով: Մի քանի ամիս անց արդեն ԿՄԻ Ստեփանակերտի բաժանմունքում զգալի էր ընդհատակյա կազմակերպության աշխատանքը [17]:

ՀԸԱԿ-ի հետքերը թաքցնելու նպատակով որոշվում է ստեղծել երիտասարդական կազմակերպություն, որը կոչված էր նոր անդամներով համալրելու կուսակցությունը և փոխարինելու արդեն իսկ հեղինակազրկված կոմերտմիությանը: Այդպես ստեղծվում է ԱՌԵՄ: Ակտիվիստներից Ալիկ Սարգսյանի վկայությամբ՝ մինչև 1989թ. աշունը ձևավորվել էր նաև ուսանողական ջոկատը, որը դեռ գործողություն չէր սկսել: Ուսանողական ջոկատի գործնելության սկիզբ կարելի է համարել 1989թ. աշունը, երբ, կապ հաստատելով Բիւս-ի հետ, 10-15 մարդուց կազմված առանձին խմբերով, շինջոկատի պատրվակի տակ, ուսանողները 10-20 օրով մեկնում էին Բերդաձոր ու զինված հերթապահություն տանում ենթաշրջանի 4 գյուղերում: Այն ժամանակ մշտական հրամանատար չկար, այլ ընտրվում էր առաջադրանքը կատարելուց առաջ, հենց առաջադրանքը կատարելու վայրում: Ընդհանուր հրամանատարը Արկադի Կարապետյանն էր, որի հետ համաձայնեցվում էր ամեն մի գործողություն, իսկ որոշում կայացնելիս հաշվի էր առնվում բոլոր մասնակիցների կարծիքը: Գաղափարական գործողություններից բացի՝ ուսանողներն զբաղվում էին նաև պարտիզանական գործողություններով, ավելի հաճախ զենքի ու զինամթերքի հայթայթումով և տեղափոխմամբ, դիվերսիոն գործողություններով սահմանամերձ բնակավայրերում, ուր նաև շփումների մեջ էին մտնում տեղի բնակիչների հետ՝ վստահելի մարդիկ գտնելու նպատակով [18]: 1990թ. օգոստոսի 11-ին ՀԸԱԿ-ի աջ թևի հիմքի վրա Հ.Խաչատրյանի նախաձեռնությամբ հիմնադրվել է ՀԱՃ ռազմաքաղաքական կազմակերպությունը, որի գաղափարախոսության հիմքը Գարեգին Նժդեհի «Ցեղակրոն» ուսմունքի հիմնադրույթներն էին: Կազմակերպության մեջ ընդգրկվել են մեծ թվով ուսանողներ, որոնք, գաղափարական աշխատանքներից բացի (1990-91թթ. հրատարակվել է «Ավետյաց երկիր» թերթը)[19]: Ուսանողական ջոկատը 1990-93-ին մասնակցել է Մարտունիի (Ղարադաղլու), Ասկերանի (Փառուխ, Ղահրավ, Սառնաղբյուր), Շուշիի (Բերդաձորի ենթաշրջան), Մարտակերտի (Տոնաշեն, Թալիշ, «Պուշկեյնյալ» և հեռուստաաշտարակի բարձունքներ, Դրմբոն, Առաջածոր) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: 1993-ի մարտի 13-ին ջոկատը լուծարվել է, ազատամարտիկներն ընդգրկվել են ԼՂՀ ԻՊՈ տարբեր ստորաբաժանումներում: Տարբեր ռազմական գործողությունների ժամանակ հրամանա-

տարներ են եղել Մ. Բաղդյանը, Շ. Խաչատրյանը և Ա. Աբրահամյանը [20]:

Այսպիսով՝ Արցախի մայր բուհն իր մասնակցությունն է ունեցել մեր հանրապետության պաշտպանության ու կայացման գործում: Ուսանողներն ու դասախոսներն աչքի են ընկել բոլոր ուղղություններում մղված մարտական գործողություններում, զինվորական կառույցներ ու ստորաբաժանումներ ստեղծելու և ղեկավարելու գործում: Ուսանողներ Է. Բարսեղյանի [21], Լ. Կարապետյանի, Ի. Հասրաթյանի և այլոց անձնվեր օրինակն ու խիզախումները ոգեշնչման աղբյուր էին բազմաթիվ ազատամարտիկների համար, ովքեր տոգորվում էին անարգ թշնամուն ջախջախելու, Արցախի սահմաններից հեռու շարտելու վճռականությամբ [22]:

Արցախյան ազատամարտում իր ուրույն դերակատարությունը ունեցավ նաև ԵՊՀ-ն:

ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմն իր ժողովներում և ԽՄԿԿ Կենտկոմին ուղղված դիմումներում բողոք և անհամաձայնություն էր հայտնում Արցախի հարցում Կրեմլի որդեգրած քաղաքականությանը:

Խորհրդային ինտերնացիոնալիզմից անցում էր կատարվում հայոց ազգային գաղափարախոսությանը:

Համալսարանականներն առաջին շարքերում էին ոչ միայն խոսքով, այլև գործով: Արցախում և Հայաստանի մյուս սահմանամերձ շրջաններում Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմն ստիպեց մի շարք ֆակուլտետների ուսանողներին կիսատ թողնելու համալսարանական ուսումնառությունը, ստեղծելու կամավորական ջոկատներ և մեկնելու Արցախ, ինչպես նաև Հայաստանի մյուս սահմանամերձ շրջաններ, իսկ նրանք, ովքեր մնացին համալսարանում, ամեն կերպ աջակցում էին մարտնչող Արցախին: Միայն 1988-1989 թթ. ընթացքում համալսարանականները կազմակերպեցին 10-ից ավելի ուղղաթիռային չվերթ՝ Արցախ հասցնելով հազուստ, սննդամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ:

1989թ. կեսերից համալսարանում ստեղծվել և գործում էր հատուկ հանձնաժողով, որը հիմնականում զբաղվում էր Հայաստանի սահմանամերձ շրջաններին և Արցախի ինքնապաշտպանական ջոկատներին պարեն, հազուստ և զենք-զինամթերք մատակարարելու հարցով: Համալսարանում բոլորն, ինչ-որ ձևով փորձում էին օգնել Արցախի հայությանը: Օրինակ՝ ֆիզիկայի ֆակուլտետում հրացանների համար կոտորակ էին պատրաստում, կապարե զնդակներ ձուլում Արցախ ուղարկելու համար, իսկ քիմիայի ֆակուլտետի դասախոսները առաջինն էին, որ Հայաստանում սինթեզեցին հրթիռային վառելանյութ[23]: Բացի վերոնշյալ ուսումնական հաստատություններից՝ Արցախյան գոյապայքարին մասնակցել է նաև ՀՊՏՀ-ը:

1988 թվականին, երբ սկսվեց Արցախյան շարժումը, հայաստանյան բուհերը, ուսումնական կառույցներ լինելուց բացի, դարձան գաղափարական և կազմակերպչական լուրջ օջախներ և ձեռնամուխ եղան Արցախի անկախացման կազմակերպմանը: Այս ամենից անմասն չմնաց նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ նախկին ժողինստիտուտը: Հենց այստեղ էլ մի խումբ ուսանողների ջանքերով 1989 թվականին ձևավորվեց «Նժդեհ» կամավորականների ջոկատը, որը հատուկ և գաղտնի գործողություններ էր իրականացնում: Ջոկատի գերխնդիրը մարտնչող Արցախին օգնություն հասցնելն էր: Կամավորականներն իրականացնում էին բազմաբնույթ աշխատանքներ՝ հավաքագրում էին զենք, սնունդ, հազուստ և անհրաժեշտ պարագաներ կազմակերպում այդ բեռների անվնաս տեղափոխումը Արցախ: Սկզբնական շրջանում ջոկատն իր գործունեությունը ծավալում էր Երևան քաղաքում, իսկ, 1990 թվականից սկսած, ուսանողական շինջոկատի անվամբ քողարկվելով, մի քանի անգամ մեկնում է Արցախ ու ՀՀ սահմանամերձ այլ բնակավայրեր և մասնակ-

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ցում ռազմական գործողությունների: 1990 թվականի ապրիլ ամսից **ԽՍՀՄ** հատուկ ծառայությունների ուշադրությունը սևեռվում է «Նժդեհ» կամավորականների ջոկատի վրա, ինչի պատճառով ջոկատը փաստացի դադարում է գոյություն ունենալուց և անցնում է ընդհատակյա գործունեության [24]:

Արցախյան պատերազմում իր ակտիվ մասնակցություն է ունեցել նաև **Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը (ԵՊԻԻ)**. ներկայումս այն կոչվում է **ՀԱՊՀ**:

Հարկ ենք համարում նշել, որ ապրիլյան պատերազմի ժամանակ ևս տարբեր ուսումնական հաստատություններում սովորողներն ակտիվորեն մասնակցում էին թիկունքում ծավալված բոլոր աշխատանքներին:

Այսպիսով՝ 2016թ. ապրիլի սկզբին, երբ Ադրբեջանի ռազմաքաղաքական դեկավարությունը պատերազմ սանձագերծեց Արցախի դեմ և թիրախավորեց խաղաղ բնակչությանը և հասարակական նշանակության կառույցները՝ ցույց տալով իր ահաբեկչական ձեռագիրը, ուսումնական հաստատություններում սովորողներն Արցախյան ազատամարտում մասնակցած իրենց սերնդակիցների օրինակով կամավորագրվեցին ձևավորված կամավորական շարժմանը ու կանգնելով հայ զինվորի կողքին՝ անառիկ պահեցին հայրենի երկրամասի սահմանը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Մ.Ա., Լեռնային Ղարաբաղ. տասնամյա պայքարի հիմնական փուլերը: ԼՂՀ անկախության տասնամյա տարելիցին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, ԵՊՀ պատմութ. ֆակուլտետ, Եր., 2001, էջ 15-18, տես նույնի՝ Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., Շուշի «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2015, էջ 39-40:
2. Հարությունյան Մ., ԼՂՀ Պաշտպանության բանակի մի քանի առանձնահատկությունների մասին, Ստեփ., 2010, էջ 3-4:
3. Խանյան Ս., Արցախի պետական համալսարանը ազգային-ազատագրական պայքարում/«Արցախի համալսարան» ԱրՊՀ պաշտոնաթերթ, փետրվար-մարտ 1998թ.: Նույնի՝ Ազգային-ազատագրական պայքարի թեժ օջախը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփ., 2007 N2, էջ 3-6:
4. Գրիգորյան Լ., Ընդհատակում//«Արցախի համալսարան» ԱրՊՀ պաշտոնաթերթ, փետրվար-մարտ 1998թ.:
5. Սարգսյան Ս., Ուսանողներն ու Արցախյան գոյամարտը //«Հայ զինվոր» ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ, 2000թ., 5-12 օգոստոս, թիվ 31:
6. Բալայան Ռ., Արցախի գոյապայքարում մեր ուսանողներն են// «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 1998 N1, էջ 73-76: Տես նաև նույնի՝ ԱրՊՀ շրջանավարտների հայրենասիրական խիզախումները, Արցախյան ազատամարտում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Եր., 2005 N 5-6, էջ 126-131, նույնի՝ ԱրՊՀ մտավորականությունը և Արցախյան հերոսամարտը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», Եր., 2006 N3-4, էջ 96-97:
7. Բալայան Վ.Ռ., Բալայան Ռ.Ա., Հարությունյան Մ.Ա., Հուշամատյան սխրանքի (կենսագրական պատումներ), Ստեփանակերտ 2002, 80 էջ:
8. Բալայան Վ.Ռ., Բալայան Ռ.Ա., Հարությունյան Մ.Ա., Անկախության նվիրյալները, ԱրՊՀ ուսանողները Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ուղիներին, Եր., 2009, 92 էջ:

9. Հարությունյան Մ. Ա., ԱրՊՀ-ն Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին// ԱրՊՀ գիտական ընթերցումներ/ Ձեկուցումների հիմնադրույթներ 20-21 ապրիլի 2009: Եր., 2009, էջ 6-8, նույնի՝ Արցախի մայր բուհի ուսանողությունը հայրենիքի պաշտպանության դիրքերում, «Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն»։ ԼՂՀ և ՀՀ անկախությանը նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 235-244: Տես նաև նույնի՝ Ազգային ազատագրական նորոյա պայքարում Արցախի մայր բուհի դերի մասին, «Մետրոպ Մաշտոց Համալսարանի լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., 2015, էջ 93-105:
10. «Ապառաժ» 2003թ. 1-28 փետրվարի N3-4, «Հայրենյաց պաշտպան», մարտ 2003թ., «Հայ զինվոր» ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ, 2000թ., 5-12 օգոստոս, թիվ 31, «Արցախի համալսարան» ԱրՊՀ պաշտոնաթերթ, փետրվար-մարտ 1998թ.:
11. Ուսանողությունը և ղարաբաղյան ազատագրական պատերազմը, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ. հանրագիտարան մեկ հատորով, Հ.Այվազյանի խմբ., Եր., 2004, էջ 639-650:
12. «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, գործ 18, թ. 1, եր.ա, «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, գործ 18, թ. 1, եր.բ:
13. Факты о политике этнической чистки и государственного террора в отношении армян, проводимой властями Азербайджанской ССР в конце 80-х – начале 90-х годов XX века. Свидетельства очевидцев о преступлениях, совершенных азербайджанцами в отношении мирного армянского населения г. Шуши (документы и материалы).- Состав., отв. ред., авт. вступ. статьи: М. А. Арутюнян// “Качар”, Ежегодник научного центра «Качар», книга 2 Шуши, Издательство научного центра «Качар», 2014.
14. Հարությունյան Մ., Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009թթ.): Պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Ստեփ., 2010, էջ 66-68:
15. Վարդանյան Հ., Ազգային լեզուն//Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ. հանրագիտարան մեկ հատորով, Հ.Այվազյանի խմբ., Եր., 2004, էջ 42-43: Տես նաև՝ Ավանեսով Հ., Աշակերտների մասնակցությունը Արցախյան ազգային ազատագրական պայքարին//«Հայրենյաց պաշտպան» հունվար 2017թ. N183, էջ 4:
16. Բալայան Վ.Ռ., Արցախի պետական համալսարանի պատմությունը (1969-2009թթ.), Ստեփ., 2009, էջ 20:
17. Ավանեսով Հ., ԼՂԻՄ գոյության վերջին տարիներին հայ ազգաբնակչության զինված ինքնապաշտպանության կազմակերպման մասին //Մետրոպ Մաշտոց Համալսարանի լրատու», գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., 2016, էջ 59-60:
18. Բալայան Վ.Ռ., Բալայան Ռ.Ա., Հարությունյան Մ.Ա., Անկախության նվիրյալները, ԱրՊՀ ուսանողները Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ուղիներում, Եր., 2009, էջ 11:
19. Հարությունյան Մ., Ազգային ազատագրական նորոյա պայքարում Արցախի մայր բուհի դերի մասին //Մետրոպ Մաշտոց Համալսարանի լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., 2015, էջ 100:
20. Հարությունյան Մ., «Ցեղակրոն»//Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ., հանրագիտարան 1 հատորով, էջ 635:

**ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017**

- 21. Հարությունյան Մ., Ասկերան. հերոսության հասցեներ, Ասկերան 2005, էջ 34:
- 22. Հարությունյան Մ., Արցախի մայր բուհի ուսանողությունը հայրենիքի պաշտպանության դիրքերում//Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն».  
ԼՂՀ և ՀՀ անկախությանը նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 243:
- 23. Երևանի պետական համալսարանը Արցախյան զոյապայքարում / ԵՊՀ, Հայագիտ. հետազոտ. ինստիտուտ: Աշխ. խմբի ղեկ., գլխ. խմբ.՝ Ա. Սիմոնյան: Կազմ. և հրատ. պատրաստեց Ժ. Մանուկյանը.- Եր.: ԵՊՀ հրատ., 2011, էջ 7-8:
- 24. «Նժդեհ» ջոկատ, [https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%AA%D5%A4%D5%A5%D5%B0\\_%D5%BB%D5%B8%D5%AF%D5%A1%D5%BF](https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%AA%D5%A4%D5%A5%D5%B0_%D5%BB%D5%B8%D5%AF%D5%A1%D5%BF)[վերջին դիտումը 16.11.2016].

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ**

- ԱՀ**-Արցախի Հանրապետություն
- ԱրՊՀ**- Արցախի Պետական Համալսարան
- ԱՌԻԵՄ**-Արցախյան Ռեսանողաերիտասարդական Միություն
- ԲԻՆ**-Բերդաձորի Ինքնապաշտպանության Խորհրդ
- ԵՊՀ**-Երևանի Պետական Համալսարան
- ԻՊՈՒ**- Ինքնապաշտպանության Ուժեր
- ԼՂԻՄ**-Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ
- ԼՂՀ**- Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
- ԽՄԿԿ**-Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցություն
- ԿԳՄՆ**-Կրթության Գիտության ու Սպորտի Նախարարություն
- ԿՄԻ**- Կիրովականի Մանկավարժական Ինստիտուտ
- ՀԱՃ**- Հայ Ազգայնականության Ճակատ
- ՀԱՊՀ**-Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
- ՀԸԱԿ**-Հայոց Ընկերավարական Արցախական Կուսակցություն
- ՀՀ**-Հայաստանի Հանրապետություն
- ՊԱԿ**- Պետական Անվտանգության Կոմիտե
- ՀՊՏՀ**-Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան
- ՊՆ**-Պաշտպանության Նախարարություն
- ССР**- Советская Социалистическая Республика

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Ուսումնական հաստատությունների սովորողների մասնակցությունը  
արցախյան ազգային ազատագրական պայքարին  
Հովիկ Ավանեսով**

Արցախյան ազատագրական պատերազմը հայ ժողովրդի նորագույն պատմության փառավոր էջերից է: Այդ պայքարի շնորհիվ վերականգնվեց Հայոց պետականությունը: Ղարակազմիկ այս պատմական իրադարձությանն իրենց ուրույն դերակատարությունն ունեցան ուսանող ազատամարտիկները:

**РЕЗЮМЕ**

**Участие студентов учебных заведений в Арцахской освободительной борьбе  
Овик Аванесов**

***Ключевые слова:** Педагогический институт Кировакана, Силы самообороны, «Национальный легион», Арцив -3.*

Арцахская освободительная война – одна из доблестных страниц новейшей истории армянского народа. Благодаря этой борьбе была восстановлена Армянская государственность. В формировании этой исторической действительности важнейшую роль сыграли студенты -освободители.

**SUMMARY**

**The Participation of Students from Educational Institution in  
the Artsakh National Liberation Movement  
Hovik Avanesov**

***Keywords:** Pedagogical institute of Kirovakan, Self-Defense forces National Legion «Arciv -3».*

The Artsakh Liberation War is one of the most glorious pages in the modern history of the Armenian people. As the result of this struggle the Armenian statehood was restored. Student freedom-fighters had their essential role in this historical event.